ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 11.09.2025թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/12-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «30» դեկտեմբերի 2025թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սևանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 11.09.2025թ. կնքված N ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2025/12-2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը փոխադարձ համաձայնվեցին.

1.1 Պայմանագրի հավելված 2-ի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում նշված ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով, որը կհաշվարկվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու հաջորդ աշխատանքային օրվանից:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br>ք. Երևան Վ.Սարգսյան 3/3<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011031912<br>ՀՎՀՀ 02565518<br>Գլխավոր քարտուղար՝<br>Դավիթ Գասպարյան | «ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ<br>գտնվելու վայրը Գեղարքունիքի մ. Ճամբարակ, Տերյան փ. 4<br>հհ 1570099448180100<br>հվհհ 08626999<br>Տնօրեն ՝ Ա**. Սևանյան**<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ. Տ. |

30.12.2025

X

ԴԱՎԻԹ
ԳԱՍՊԱՐՅԱՆ
Signed by: GASPARYAN DAVIT 1407810154

Digitally signed by
VARDAN SOGHOMONYAN 3604850045
Date: 2025.12.30 15:27:07